

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՅԱՍՆԻԿՅԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2017ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱՏԱՐԱԾ
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ

Արմավիրի մարզի Մյասնիկյանի համայնքապետարանը բնակչության բարեկեցության բարելավման և համայնքային խնդիրները լուծելու նպատակով կատարել է հետևյալ աշխատանքները.

2017թվականին Արմավիրի մարզի Մյասնիկյանի համայնքապետարանը վերանվանվել է «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մյասնիկյանի համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկի:

Արմավիրի մարզի Մյասնիկյան համայնքում 2017 թվականի ընթացքում գումարվել է 6 հերթական և 5 արտահերթ ավագանու նիստեր:

Ստացվել է 270 գրություններ, պատասխանվել է 198 գրությունների, ընդունվել է համայնքի ղեկավարի 106 որոշումներ, արձակվել 34 կարգադրություններ:

Համայնքի ղեկավարի մոտ ընդունելության են մասնակիցել 165 քաղաքացի, իսկ ավագանու մոտ 32 քաղաքացի:

Քարտուղարության բաժինը գրանցել է 1008 քաղաքացիներին ընդունելություն, և մատուցվել տարբեր ոլորտի ծառայություն:

Կրթություն , մշակույթ ,երիտասարդություն

Մյասնիկյան համայնքապետարանը կազմակերպել է համայնքի ենթակայության կազմակերպությունների՝ մանկապարտեզի, կուլտուրայի տան, գրադարանի, երաժշտական դպրոցի ,սպորտի խմբակի գործունեությունը.

-Մայիսի 1-ից վերաբացվել է համայնքի մանկապարտեզը , իր 4 խմբով, որտեղ հաճախել են 116 երեխաներ: Համայնքի բյուջեից 13816,,4 հազար դրամ գումար հատկացվել է մանկապարտեզի սննունդի ձեռք բերման և աշխատավարձի վճարման համար.

-Համայնքում գործում է Երաժշտական դպրոց , որտեղ դաշնամուրի բաժնում սովորում են 10 աշակերտներ: Համայնքի բյուջեից 3003,6 հազար դրամ գումար հատկացվել է երաժշտական դպրոցին՝ որպես աշխատավարձ:

-Մշկույթի բնագավառում կազմակերպվել և անցկացվել է տարբեր միջոցառումներ՝ նվիրված մարտի 8-ին, հաղթանակի օրվան , երեխաների օրվան և

վերջին զանգի , Հայաստանի Հանրապետության անկախության և Ամանորի կապակցությամբ:

-Ամանորին համայնքում տեղադրվել է մեծ տոնածառ, զարդարվել է համայնքի կենտրոնը , դեկտեմբերի 31-ին տեղի է ունեցել մեծ միջոցառում, հրավառություն և երեխաներին բաժանվել ամանորի նվերներ.

-Համայնքի բյուջեից ձեռք է բերվել 20,0 հազար դրամ գումարի համերգի տոմսեր և և հունիսի 1-ի կապակցությամբ երեխաներին հատկացվել մանկական համերգի տոմսեր:

-Համայնքում գործում է «Ձյոդո» և «Մայտայ» սպորտայի մարզաձևի խմբակներ, որի շրջանակներում կազմակերպվում և անցկացվում է մրցութային խաղեր ու միջոցառումներ:

-համայնքի բյուջեից 434,0հազար դրամ գումար է հատկացվել և սպորտ դպրոցի համար ձեռք է բերվել հատուկ սպորտային գորգեր.

-Համայնքը աջակցում է <<Հայրենական>>, <<Ազրոյրատու>> , <<Արտակարգ >> «Ընկեր» թերթերի հրապարակման և տարածման համար. կանոնավոր իրականացվել է աշնան գորահավաքի կազմակերպման աշխատանքները, համապատասխան աշխատակցի կողմից վարվում է զինզպարտ քաղաքացիների հաշվառման գրանցամատյանները.

-Համայնքի կենտրոնում տեղադրվել է մեծ գրուցարան,իր սեղանով և նստատեղերով, որը հնարավորություն է տվել համայնքի տարեցներին խաղալու և հետաքրքիր ժամանակ անցկացնելու .

3.Կոմունալ տնտեսություն

-2017թվականի ապրիլ ամսին գազաֆիկացվել է համայնքապետարանի շենքը, այնուհետև մանկապարտեզի շենքը.

-մանկապարտեզի շենքի շրջակա հարակից տարածքը ամբողջովին բետոնապատվել է.

-տեղադրվել է շենքին նոր դարպաս և խոհանոցի համար ձեռք է բերվել ջրամատակարարման սարքեր.

-իրականացվել է մանկապարտեզի դահլիճի և խոհանոցի վերանորոգում .

-համայնքի գրադարանում կատարվել է ընթացիկ վերանորոգում , տեղադրելով պատուհան ու դուռ վարչական սենյակին.

-համայնքի երաժշտական դպրոցում կատարվել է վերանորոգման և ներքին հարդարման աշխատանքներ.

- համայնքի ֆոնդային բյուջեից հատկացվել է 2500,0 հազար դրամ գումար և համայնքի թվով երեք բազմաբնակարանային շենքեր (72 բնակարաններ) գազաֆիկացվել է.

- Մյասնիկյան համայնքի սկզբնամասում տեղադրվել է քրիստոնեական լուսավոր խաչ.

- համայնքում կոմունալ տնտեսության բնագավառում համայնքի միջոցներով կանոնավոր իրականացվում է աղբաթափման և սանիտարական մաքրման աշխատանքներ.
- համայնքում իրականացվել է կոյուղու կեղտաջրերի հեռացման և մաքրման աշխատանքներ.
- վերանորոգվել է համայնքի Երևանյան, Շիրազի, Իսահակյան, Խանջյան, Ավետիսյան փողոցների գիշերային լուսավորության համակարգը և տեղադրվել նոր լամպեր.
- 2017 թվականի ապրիլ ամսին կատարվել է ամբողջ համայնքի փողոցների և ճանապարհների փոսալցման և հարթեցման աշխատանքներ.

1. Գյուղատնտեսություն

- 2017 թվականին համայնքի գյուղատնտեսական նշանակության հողերից կատարվել է 105,0 հա հողատարածքի վրա կատարվել է բանջար-բոստանային կուլտուրաների ցանք
- Համայնքի գյուղացիական տնտեսությունների կողմից արտադրվել և իրացվել է 700 տոննա ծիրանի բերք.
- Աջակցություն է ցուցաբերվել գյուղատնտեսության արտադրության վարկավորման գործնթացին.
- աճուրդային եղանակով օտարվել է 1,65 հա գյուղնշանակության այլ հողատարածք
- հողաշինության բնագավառում աշխատանքներ են տարվել հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների հաստատման, հողամասերի նպատակային նշանակության փոփոխության վերաբերյալ.
- համայնքում տարվել է առկա անասնազլխաքանակի հաշվառման աշխատանքներ և հիվանդությունների կանխարգելման միջոցառումներ.
- Աշխատակազմի կողմից ուսումնասիրվել, պարզաբանվել և օրենքով սահմանված կարգով ընթացք է տրվել գյուղատնտեսության վերաբերյալ շուրջ 7 դիմումներ.
- Պետական աջակցությամբ համայնքում գյուղացիական տնտեսություններին է հատկացվել է 62100 կգ ազոտական պարարտանյութ, 3550` ֆոսֆորոտրական, կալյումական ` 2250:

4. Ֆինանսական և սոցիալական ծառայություն

- 1. Կազմակերպվել և միջոցներ է ձեռնարկվել հիվանդների, սոցիալապես անապահով խավերի սոցիալական պայմանների բարելավման համար.
- Համայնքի բյուջեից 3000,0 հազար դրամ գումար է տրամադրվել բուժման կարիք ունեցող բնակիչների, սոցիալապես անապահով պայմաններում բնակվողների և մահացածների ընտանիքներին` որպես դրամական օգնություն.

-Համայնքի բյուջեից 100,0հազար դրամ գումար հատկացվել է «Հատուցում» բարեգործական ընկերությանը, որպես օգնություն, ծրագրի շրջանակներում Արցախյան պատերազմի երկու հաշմանդամ մասնակիցներին հանգստի ուղարկելու համար.

_ իրականացվել է աշխատակազմի հաշվապահական հաշվառման աշխատակազմի ֆինանսական, հարկային, սոցիալական ապահովության պարտադիր վճարների գծով գործառույթները.

- Իրականացվել է համայնքապետարան և նրա ենթակա կազմակերպությունների հիմնական միջոցների ամենամյա հաշվառման և գրանցման աշխատանքներ. Համայնքապետարանը իր և ենթակա կազմակերպությունների աշխատավարձի գծով պարտք չունի.

2017թվականի բյուջեի կատարողականը`

Ընդհանուր եկամուտների գծով – նախատեսվել է 93811,3 հազար դրամ, կատարողականը` 95749,4 հազ.դրամ (102,1%)

Սեփական եկամուտների գծով- նախատեսվել է 19402,0 հազար դրամ, կատարողականը` 21340,0 (110,%)

Մյասնիկյան համայնքում նախադպրոցական կրթության ընդլայնման, բնակչության կենցաղային պայմանների բարելավման, հանրային ծառայությունների մատուցման համար համայնքում կան լուծելու շատ հիմնախնդիրներ, դրանք են`

- կուլտուրայի տան տանիքի նորոգում
- մանկապարտեզի շենքի վերանորոգում
- Ներհամայնքային ճանապարհների և փողոցների բարեկարգում
- Համայնքում կոյուղու ցանցի ընդլայնո



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Արմավիրի մարզ գ. Մյասնիկյան
Armavir marz Miasnikyan village

19. հունվարի 2018թ.

Արձանագրություն թիվ 1

2018թվականի հունվարի 19-ին ժամը՝ 14:00-ին համայնքապետարանում տեղի ունեցավ համայնքի ընդհանուր նիստ: Նիստին մասնակցում էին մարզպետարանի աշխատակազմի ՏԻ ՀԳՄ տարածքային ստորաբաժանումների գործունեության համակարգման բաժնի պետ՝ Գևորգ Գևորգյանը, համայնքապետարանի և ենթակա կազմակերպությունների աշխատակիցներ, ավագանու անդամներ, համայնքի ակտիվ բնակիչներ:

Նիստի նախագահ՝ Տ.Բաղդասարյան
Քարտուղար՝ Ա.Խաչատրյան

Օրակարգում- համայնքի ղեկավարի 2017թվականի ընթացքում կատարած աշխատանքների հաշվետվության մասին.

Զեկուցեց համայնքի ղեկավար՝ Տ.Բաղդասարյանը.

Նա ներկայացրեց 2017թվականի ընթացքում համայնքում իրականացված գործունեության, աշխատանքների և խնդիրների մասին հաշվետվությունը: Հաշվետվության շրջանակում մասնակիցներին ներկայացվեց անցկացված ավագանու նիստերի, տարբեր ոլորտներում կատարած աշխատանքների և համայնքում առկա խնդիրների իրականացմանն ուղղված ծրագրերի և միջոցառումների մասին:

Հաշվետվությունը ներկայացվեց ըստ առանձին բնագավառների, իսկ բարձրացված հարցերին համապատասխանաբար տրվեցին սպառիչ պարզաբանումներ և պատասխաններ:

Հաշվետվությունն ամփոփեց մարզպետարանի ներկայացուցիչ՝ Գ. Գևորգյանը: Արմավիրի մարզի Մյասնիկյան համայնքի համայնքապետարանի 2017թվականի հաշվետվությունը գնահատվեց դրական:

Համայնքի ղեկավար՝

Տ.Բաղդասարյան

